

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՆՑԻՑ ԱՆՑԵԼՈՑ ՍԵՎԱՆԱՑ ՎԱՆՈՒՑ

Երաբեալ Մանուէլ Վարդապետի
 Կիւմի-դիւանդոյ 1830 թի, 1 Սէպտեմբեր:

ԳԼՈՒԽ Ե

Ըստ նախնի առածից՝ չիք ցանկալի յանդորրութեան մտաց, քան զճանօթութիւն հնութեան Հայրենեաց: Նոյնպէս և ոչինչ զեղեցիկ հետեութիւն նարդիրանափրաց անխոնջ աշխատանք, քան յառաջածութիւն զազեալ Հայրենեաց:

Եւս եռանդ Հայրենասիրութեան, թէպէտ ի հերոսն հետէ յանձնիւր բանասէրս իբր երկրորդ բնութիւն տալաւորեալք կան, ըստ այնմ, «Վթացին ի հոգս իւրեանց»¹ բայց բազմաց միշտ ոչ ներէ պարտադարձ բերպէս բաղձացելոյն ժամանել, զանազան դիպուածովք. վասնորոյ ապարդիւք մը նան եռանդք բարեճիգք ցանկութեանց նոյնն: Իսկ այժմ մինչ այցելութեամբ վերին, և բազմադարձ Ենքնակալին ամենայն Ուսաստանայց Նիկիոյ Պաւլոյիչին, ազատութիւն ժամանեալ Հայրենեացն մերոց՝ խոհական կառաւարութեամբ և քաջ սպարապետութեամբ պայծառափայլ Ներեւանու Ղրաթ Իւան Ֆէտրիչ Պասկելիչին և Եթանաս Իւանիչ Արասովիի Օռաւարովին, զի ի ձեռս այն ահեղ պարկաստան կառաւարչաց (Աւգ. 20ին 1827 և Հ. Ռ. Մ. Վ. Օ.), քայքայեցաւ բերդ և պարիսպ Սարաւարապատ ասացեալ տեղւոյն, որ Հիւսէին Սարտարն և եղբայր իւր Հասան Իսան ասացեալքն ի հիմանէ կառուցեալք կին զայն քաղաք ամրակառոյց պարբնապաւ և ամենայն պատրաստութեամբն: Նաև ի նոյն թիւ, զկնի տասն աւուր Հոկտեմբերն՝ անմատչելի կարծեցեալ ըստ Ն-

րիքովի եօթնամեղկեան պարիսպն Ներեւան քաղաքի, առանց զօրաց վնասու երկուց կողմանց, ի յահեղ թնդանօթացն Ուսաստանու քայքայեալ հալեցաւ, իբրև զաղ և զսառոյց, որ էր անակնունել իմն յաղթանակութիւն և զլիովին ազատութիւն Հայրենեացն մերոց, ուր ներկայ էր և սրբազան Ներսէս Երբ Նպիսկոպոսն զանազան նշանակիր Եսպեան Աշտարակեցի: Նաև նուաստութիւն իմ ի սոյն թիւ Յունիսի տասնէն ելեալ ի կողմանցն Ղրոսիմու՝ մտի ի սուրբ Աջմիածին ի Հոկտ. 6ին, և յեօթներորդի աւուրն ըստ հրաւիրելոյ յիշեալ Ներսէս Երբ Նպիսկոպոսին գնացեալ Ներեւան քաղաք՝ եղէ ականատես հրաշալի աւերակութեանց քաղաքին և պարսպացն:

Երբ՝ զկնի սոյնասարաս ամենակարող այցելութեանց երկնից, ըստ Ներգոյն թէ՛ ձմեռն էանց, Պարսկային անգութ խրատութեամբն, այդի սուրբ եկեղեցւոյն ծաղկեցաւ, շնորհիւ Պայսերութեանն Ուսաց, զօրանան ձեռք լքեալք և ծունկըք կիթուցեալք՝ հարիւրաւոր ամենիւք բարբարոսական սրով զարհուրեալ օրդւոց Հայկազանց: Ժամ է ուրեմն տալ անձնիւր զրիչ զքաղցր բուրումն անուշահոտութեան Հայրենեաց. ըստ որում չիք այլ ևս խափան բարետենչ ուսումնասիրաց՝ մտրակել զգրիչս յասպարէղ քարաիզաց, ածել յՆերեւան բազում պարագայիւք զզազեալ և զճածկեալն ի հարկաւորացն Հայրենեաց, որոց նսեմութիւնք տեսնին առթեալք՝ յանդադար պատերազմացն յարուցմանց, ի փոփոխութենէ իշխանութեանց, ի դադարմանէ զրականութեանց, ի կորուստ և յապականութիւն մատնելոյ օրագրութեանց և յիշատակարանաց, և առաւել զսոյոյն ասել ի զլեաւոր անհոգունակութեանց յետագայ յաջորդաց ի նախնեացն հարկաւոր ծանուցանելեաց:

Նա այսպիսի դիպուածովք նսեմացեալ տիպ և զազափարն անցեալ երևելի իրաց, նոր ի նորոյ դրշաւ պաակերացուցանելն հաւասարելի է նորոգ ստեղծադործութեան, կամ ծննդեամբ ի լոյս ածման:

Նմանիքի յուսարով իմ՝ յապագայ բանասէր Հարց և Եղբարց ներողամիտ ասպնջականութիւնսն, որոց թէպէտ լիցի գտանել յայսպիսեաց բարեպէս ապացուցութիւնքն, ակնունիմ, զի լցուսցեն զթերութիւն իրր յոչէից գրողիս, զի և ինքեանք վերակոչեցին՝ զօրէնս Քրիստոսի կատարողք, բառնալով զտկարութիւն տըկարացելոյս, և Եղբայրաբար օգնականութեամբ իւրեանց ամուր պարիսպ Հայրենեաց որոշեալ ծանիցեն:

Ողն այս անասերիւր յոյս՝ վստահացուցեալ զնուաստութիւն իմ, հարկադրէ ծաղկաքաղ առնել ի յուսալի ծանօթութեանց համառօտապէս, իրր մարմնացուցմամբ, ներկայացուցանել զանցս պատմութեան, ի բազմաց կտրօտեալ ցանկալի կղզոյն Վեղամեան ծովակի, ընդ նմին և զէս անմարմնոց կայանի՝ մենակեաց ազօթիկեաց ապաստան սուրբ Անապատին Աեանու:

Թէ՛ Էւստի զայս սկզբնաւորութիւն ցանկալի անուանակոչութեանն էառ, յորոց Հարց հեազհեաէ զարդարեալ բարդաւաճեցաւ: Եւ զիմոր մինչև ցայժմ տեէ ի նոյն բարեկարգութեան, ազատ ի հարիւրաւոր ամենիւք անցեալ մրկեաց և ալեկոծութեանց, յորոց այլ վանօրեայք, թէև հարուստ և ամրակուռ բերդօրիւք պաշտպանեալք՝ չե են անսիրոճ մնացեալք:

Իսկ սուրբ Անապատս այս, յամենայն զիմաց ի մարդկային ասպնջականութեանց թափուր և ունայնաձեռն, չունելով զանդ և զարտորայս, զայդիս և զանդաստանս, զթէմ և զվիճակս, այլ կենցաղաւարութիւն բնակեաց սորին Տէրունեանն զոլով բան, թէ զիտէ Հայրն Չեր, որ սլիտոյ է այդ ամենայն, անդադար եղեալ են խընդրակ արդարութեան և արքայութեան Աստուծոյ. որք և ոչ միոյ իմիք ի մարմնաւոր հարկաւորաց յղացեալ են զկարօտանս: Ուստի զկարեւոր պարագայսն բացայայտել ժամ է մեզ հետեւելով:

Երդ թէ՛ ըստ հաւատարիմ պատմչաց և ըստ անասերիւր աւանդութեանց, որ բաղնաշարչար Նահատակն Քրիստոսի երանելին Պրիզոր՝ հանդերձ թաղաւորաւն

յամենայն քաղաք և ի գաւառս աշխարհին Հայոց շրջէր, մկրտէր զմնացեալսն և հաստատէր զամենեւին ի հաւատս Քրիստոսի. կանգնէր յամենայն տեղիս զեկեղեցիս, և յորս էին մեհեանք՝ սրբէք և տաճար առնէր Աստուծոյ, և ձեռնադրէր Նպիսկոպոսունս և քահանայս և պաշտօնեայս եկեղեցեաց (303 թ. Փ.): Եւ թէ՛ զործակից իւր ունելով, գրեթէ յամենայնի՝ զսուրբն Տրդատիոս—Յօհաննէս. որ և ինքն իսկ երանելի թագաւորն փոյթ արարեալ, զի յամենայն տեղիս անխափան տարածեցի աստուածապաշտութիւն, եհան հրովարտակ յաշխարհ՝ ամենայն Տէրութեան իւրոյ, և ըն (Ագաթ. Անտոնի. Յայսմաւ. հոկ, 5, 6, և 29. հատոր Ա. 397):

Երդ, այսու նուագ այցելութեամբ եկեալ հասեալ ի Սիւնեաց գաւառ, ի ծովակն Վեղամայ. ծագումն սորս և զայլ զիտելիսն գտանէ խնդրողն ի պատմութեան Հայոց (Ա. 702). մեզ միայն հարկաւոր է զիտել թէ՛ Վեղամ որդի Էմասեայ՝ զՎեղարքունի շրջապատիւք և ծովակուն յանձն արար Սիսակ որդւոյ իւրոյ. ի սոյն Սիսակայ սերեալք են երեք ազգք և գաւառապետք, որք են Սիւնիք, Աղուանք, և Էլիւտանք. վասնորոյ և գաւառս այս կոչեցաւ Սիւնիք և ծովակն Վեղամեան. որ զկնի վերակոչեցաւ Ծով Աեանու, ի վերայ որոյ են բանք մեր, թէ ի դալ գերերջանիկ Առաստօրիչ Հօր մերոյ, և հոգւով աշակերտեալ արքային Յօհաննու, ի Սիւնեաց գաւառ՝ ի կղզին Վեղամայ՝ ունէր (սա) մեհեան ազգին Սիւնեաց, պարսպեալ ամուր սատուարաւ և զղեկօք. զտունն մեհենից ազօթիւք սրբագործեալ՝ ըստ այնմ ի մեջ կղզոյն ի բարձրագիտակ դագաթան լերինն էր կառուցեալ մեհեանն այն, որ ունէր զնմանութիւն սրբոյ լերին Վոզգոթայ. վասնորոյ և զսրբագործեալ Տաճարն անուանեցին սուրբ Յարութիւն: Եւ ըստ այնրմ գերերջանիկ հաւատոյ Հայրն մեր, միշտ յստուկ պաշտպան իւր ունէր զսուրբն Յովհաննէս Վարապետ. նմանիքի ի բազում տեղիս յանուն նորին կառուցանէր զերեւելի եկեղեցիս, որպէս ի Բագրեւանդ գաւառի

զԱրեք - Խորան կոչեցեալն, յանուն սրբոյն Յովհաննու Կարապետի սրբացուցեալ, և անդ մկրտեալ զարքայն Տրդատ՝ Յօհաննէս վերակոչեաց. և յայլ բազում տեղիս՝ սոյնառարաս յարդեալ զԱրախիշ Տեառն իւրոյ և զսեպհական պաշտարանն սրբացեալ իւր անձին, ըստ այնմ՝ „Հոգիք իսկ մարդարէից՝ մարդարէից հնազանդին. և թէ՛ նուազն ի լաւէ անտի օրհնեցի, : Արովհետեւ սրբազան Հայրն մեր տակաւին ի մարմնի էր, հարկ էր ունիլ նման ինքեան պաշտարան մի անձին, որպէս և զաւարա կենացն ի յայրս և ի փապարս անցոյց:

Աստի և աստ մերձ սուրբ Յարութեան սրբացեալ Տաճարին կառոյց և մատուռ մի, անուանելով սուրբ Կարապետ, ի պատիւ Եմբրդուն և արքային Տրդատայ:

Եպս զբոլոր կղզին, խորհրդակցութեամբ արքային վերակոչեցին „ Է Վ լ ա ն, իբր թէ, որ երբեմն բազնաց էր տեղի, յետ այսորիկ՝ եղեցի Եխոյենիցն Բագնեաց՝ մենամարտիկ զնուորացն Վրիստոսի Հարց անապատականաց բնակութիւն և վանք: Սակայն յետագայք կրճատելով զոմանս տառս՝ ասացին Սափան, կամ Աէփան. յորմէ ցարդ հաստատեալ, ոչ միայն կղզին, այլև բոլոր ծովն շրջապատիւք վերածոյնի ծով Աէփանու, կղզի և անապատ Աէփանու: Բայց իրականապէս՝ սուրբ Ենապատս կառուցեալ է յանուն սուրբ Եստուածածնի և երկոտասան Եռաքելոցն Վրիստոսի, որպէս կարգ պատմութեանս ցուցանէ:

Աւարդ՝ անժխտելի ապացուցութիւն է, թէ՛ այս կղզի զկնի սրբազործելոյն ի հաւատոյ Հօրէն մերմէ, ի միջոցի 400 տարւոյ, միաշաւիղ բարեկարգութեամբ օր ըստ օրէ պայծառացեալ է, սրբասէր պաշտօնէիւք, և աստուածահաճոյ վարութ. քանզի, յոչ ուրեք ի պատմութեանս ընթերցեալ լինի, թէ՛ յետ մկրտութեանն Տրդատայ՝ յատուկ ի վերայ Աէփան կղզոյն որ սրատերազմաւ եկեալ իցէ. թէև՝ թաղաւորքն և իշխանք, յայլ և այլ ժամանակս ընդ զանազան դէմս և անձինս յարուցեալ են զաւերութեան առիթս տէրութեան իւրեանց, բայց Աէփան կղզին

մնացեալ էր կոյս և անյաղթելի ի զրանց դժոխոց, մինչ ի չորս հարիւր ամն, որ համապատասխանէ Փրկչական և Հայոց — 702 —, Շ՝Օ՝Ը — թուականին. զի որոյ հիմնադիրն է սուրբ, պարտ է և ի նմանէ հիմնարկեալն սրբեալ և անշարժ գտանել. քանզի ըստ Շարակնոցին, որ ի հիմնարկութեան Տարօնոյ սուրբ Կարապետի Տաճարին, առեալ զնշխար նոյն երջանկին՝ ի ձեռս մեր Լուսաւորչին, և աղօթիւք հայցեալ յԱստուծոյ, թէ՛ „ Եստ թշնամիք մի՛ զօրացին, և մի՛ հերձուածոց աղանդք բուսցին, : Զիրաւի և զնոյն հայցուած մատուցանելն ի սրբազործութեան սուրբ Յարութեան Տաճարի և սուրբ Կարապետու. Կատրանն ամենայն ջերմեռանդութեամբ՝ հաւատով խոստովանելի է. վասնորոյ այս Ենապատ երկնաքաղաքացի պաշտօնէիւք վայել չութեամբ վայրացն, բարեխառնութեամբ օգոյն, և իբր հրաշիւք քաղցրութեամբ և առողջարարութեամբ ջրոյն, օր ըստ օրէ ծաղկեալ և բարգաւաճեալ է: Բայց թէ՛ մինչ ի նշանակեալ ժամանակն, ոչ էին յատուկ յանուանէ Վ անահաբք և Եռաջն լրդք սորին. ըստ որում յայնժամ նորածին երկնայ էր գիւտ տառիցն մերոց, Հարք ժամանակին փոյթ մեծ ունէին զսուրբ տառս և զեկեղեցական մատենանս թարգմանութեամբ և յօրինմամբ ի լոյս ածել. վասնորոյ ոչ էր փոյթ զումքէ, զպատմութեանց և զայլ սոյնպիսեաց գրել, որպէս զանկատէ Վերթողահայր Մովսէս Խորենացին: Աստի ոչ ունիմք ասել ինչ զայնց, որոց հետք ոչ երեւին:

ԳՂՈՒԻ Բ

Յաղագս պաշտելոյ Մեր-անայ զկղզին Աէփանու:

Ի հոլովել չորս հարիւր ամեայ ժամանակաց, շնորհաբաշխ Եջով սրբոյ Հօրն մերոյ սրբազործելոյ սուրբ Յարութեան և սուրբ Կարապետ Տաճարացն ի Աէփան կղզին, որ անվրդով խաղաղութեամբ զհոգեոր բարեկարգութիւնս փայլեցուցանէին երանելի Հարքն Ենապատիս Սեանու, քաղցկեղ վերքն ամենայն բարեկար-

դուժեանց և խաղաղութեանց՝ յարոյց
նիզակակից իւր զՄՐուան ոմն յԱսմայէ-
լեան տոհմէ Ստրիկան ի Հայս առաքեալ
(ըստ պատմաբանութեան Յովհաննու Աա-
թողիկոսի)՝ մարտ ընդ բոլորից իսկ ամրո-
ցաց Հայոց դնէր, և զորս միանգամ յին-
քըն զբաւէին, առհասարակ քանդեալ
աւերեալ ի վայր կործանէին:

Իսկ Սեփան կղզի, որ ի ծովակին Գեղամայ՝ Թէպետե իսկղջան նուազի անդ ոչ բմբռնեցաւ ի ձեռս նորա, սակայն զկնի երկամ մի ամաց (702. ՂԻԸ), մատնեցաւ ի ձեռս նորա, և որք միանգամ բնակեալք կային յամրոցի անդ՝ զերի առեալ տանէր, և զկապուտ կողոպուտսն յաւարի առեալ՝ սպառսպուռ քանդէր աւերէր զամրոցն:

Յաւուրս սոյն Մրուան Ստիկանի նա-
հատակեցաւ և երանելի Վաւիթ Վուեն-
ցի, ի ժամանակս Զորափորեցի Սահակ
Կաթուղիկոսի՝ և մեծ իշխանին Վարիզորի
և Սմբատայ Բագրատունւոյ որդւոյ Սմբա-
տայ, որք զրեթէ այնպէս կառավարէին
զայաստան, որպէս նաւապետն առանց
ղեկի զնաւն ի միջ յորձանուտ ծովու:
Վանդե անմիաբանք էին նախարարք և իշ-
խանք մեր միմեանց, ուստի և եկեղեցիք
խորթնացեալք: Բայց տակաւին մաղթո-
ղական աղօթիւք սրբոյ Հօրն մերոյ Վարի-
զորի Նուստուրչի “աստ թշնամիք մի՛
գօրասցին ևն”, և ըստ բանի Սաղմոսողին
“, թէպէտե զայթակրեցի, նա մի՛ կոր-
ծանեցի, զի Տէր ձեռնկալու է նորա “,
սուրբ Անապատն Աէփանու բոլորովն ոչ
մնաց անայցելու ամայացեալ, այլ հեռ-
զհեռէ երկիւղածք յԱստուծոյ և պաշտօ-
նասէր Հարք, թէ շատ և թէ սակաւ՝ ան-
պակասք էին ի սաղմոսերգութեանց և յա-
ղօթից յիշեալ կողմոյս, զուցէ ի հասա-
րակ աղօթաւորաց գորով ոչ յիշատակին
յատուկ անուամբք ի ժամանակագրու-
թիւնս պատմութեանց. բայց յետագայ
նշանքն հաւաստեն զանպակաս լինելն
աղօթաւոր միաբանից ի յայսմ կողմոյ, որ-
պէս ցուգանի հեռեկայ պարագայիւք:

9.1.11. 9.

ጊዜውን ቀርቶ የሚከተለው ድምዳሜ ምስል ካለበት በፊት
የሚከተለው መመሪያ ይሰጣል፡

Յայսմ հետազօտութեան ընդառաջ
լինին բազում հոմանուն իշխանաւոր իշ-
խանք, որպէս՝ Աշոտ, Սմբատ, Գրիգոր,
Սահակ, Վասիլ, և Վասակ: Նաև՝ ի
հոգեւոր Հարց, Մաշտոց և Սարգիս և
այլք, զորոց ուրոյնսն պարտ է բարեւոք առ-
նուլ ի միտ:

Յաւուրս իշխանութեան և թագաւորելոյ Բաղրատունեան Աշոտոյ առաջնոյ, որոյ էին չորս որդիք՝ Սմբատ, Գաւիթ, Սահակ և Շապուհ, Երաս էր եղբայր Աշոտոյ, ունէր և զերկու փեսայս, Գրիգոր Գեղեկի Երծրունի իշխանի Վասպուրական աշխարհի, և Վասակ Սիւնի չայկազն՝ Գաբուռն կոչեցեալ:

Այս Վասակ Սիւնի, փեսայ Աշոտի,
յետ բարեռք քաղաքավարելոյ՝ վճարեաց
զկեանս իւր, և պայազատեաց զիշեանու-
թիւն նորա որդի նորին Պօլիգոր Սուբան
երկրորդ, թոռն առաջնոյ Պօլիգորի Սու-
բանայ՝ այլ երեւելի և հւօր, որոյ եղն
օգնական երեք եղբարք իւր Աշոտ՝ Սահակ
և Վասիլ, որ Վասակ կոչեցաւ, արք մե-
ծագօրք և քաջակորովք:

Իսկ մայր նոցա տիկինն Սիւնեաց Մարիամ անուն, դուստր արքային Աշոտոյ, տուեալ զանձն ի ձգնութիւնս և ի պահեցողութիւնս, եկաց յայնմ հետէ կրօնաւորական կենօք, վարժեալ և յուսումն Աստուածաշունչ զրոյ՝ ըստ զրութեանց Յովհաննէս Աթոռղիկոսի և Սանփաննոս Օրբելեանի և ինչ այլաստանի:

Եյս բարեպաշտուհի արկին Մարիամ մենացեալ ի կուսանաց վանս ի նախնեաց իւրոց կառուցեալ ի Համաքարերդ, հանգեպ Աէվանու կղզոյն և Ընապատին Հարց, ուր աստուածային ազգեցութեամբ և տեսլեամբ ծագեցաւ ի սիրտ նորա՝ շէնել նոր ի նորոյ ի կղզին Աէվանու՝ զսուրբ Եստուածածնի և զերկոտաասն Ըռաբելոյ Տաճարսն, և զսենեակսն Հարցն միանձանց և ճշմարիտ կրօնաւորաց:

Յորում ժամանակի յետ վախճանի Զաքարիայ Աթողիկոսի ի Գուրն (876, և ՅԻԵ), հաւանութեամբ Եշտոյ արքայի յաջորդեաց ի տեղի նորա Տէր Գէորգ երկրորդ ի Գառնեոյ: Եւ որպէս պատմէ ազգային և ձեռնասուն աշակերտ իւր Յովհաննէս Աթողիկոս և Պատմիչ, յայսմ ժամանակի ի Սէվան կղզի փայլէր յոյժ սրբութեամբ և իմաստութեամբ Մաշտոց վարդապետ Եղեվարդեցի. յայտ է ըստ վերոգրելոյս, թէ ոչ էին պակասեալ ի սոյն հրեշտակաբնակ կղզւոյս արք. աստուածայինք և աղօթաւորք, թէև՝ անուանք նոցին ի դպրութեան վերին գրեցեալք և ի մէջ անյայտք. որ սրբոյն Մաշտոցի գրեալ զնոսա, ընկերացեալ և ինքն ի մէջ նոցին, որպէս զարեգակն ի պարս աստեղաց փայլեալ. քանզի ասէ Ճմարտապատումն Յովհաննէս Աթողիկոս. « Եւ զի ընդ այն ժամանակս փայլատակեալ պայծառանայր սուրբ այրն Եստուծոյ Մաշտոց, որ ի Սէվան կղզւոյ. որ զփառացն Եստուծոյ անշիջանելի լուսոյ ծառադայթումն յինքն նկարէր, աստուածային ծաւալմամբ և սրբափայլ կրօնիւք կենդանականօք, և հոգիախաղաց զօրութեամբք ի տեսական անդ զանտեսն տեսանէր. սակս այնորիկ ամենեցուն աչք ի նա հայէին, յաղազս տրոհել, ծանաչել մարթելոյ նորա զհոգեւորացն մասանց ընտրութիւնս, ստուգադէտ իմացուածիւ: և ասն սոյն երանելոյս գրէ (Օրպէլեանն յ38 զլուխ պատմութեան. « Բանդի Մաշտոց ետես, ասէ՝ յանուրջս գալ առ նա ինքն երկրտասան առաքելոց ի վերայ ծովուն, և նշանակեալ զտեղի եկեղեցւոյն, հրամայեալ նմա կանգնել անդ զեկեղեցի յանուն սուրբ Եստուածածնի, և երկոտասան առաքելոց, և սահմանել միարանակեացս:

Վասն սոյն երանելոյս գրէ (Օրպէլեանն յ38 զլուխ պատմութեան. « Բանդի Մաշտոց ետես, ասէ՝ յանուրջս գալ առ նա ինքն երկրտասան առաքելոց ի վերայ ծովուն, և նշանակեալ զտեղի եկեղեցւոյն, հրամայեալ նմա կանգնել անդ զեկեղեցի յանուն սուրբ Եստուածածնի, և երկոտասան առաքելոց, և սահմանել միարանակեացս:

Սոյնանման վերին ազգեցութեամբն *), շարժեալ և թաղուհին Մարիամ, որ բռնակէր մերձ առ առնս Եստուծոյ ի Կուսանաց վանս ի Յամաքարերդ, և եկեալ

(*) Չսոյն հաւաստի առնէ և բանաւոր աւանդութիւնն ի ծերոց տեղւոյս:

առ Մաշտոց՝ յայտնեաց զբարեհաճութենէ կամաց իւրոց, վասն շինութեանցն եկեղեցեաց և մենաստանացն. թէև կային յայնժամ սուրբ Յարութեան և սուրբ Կարապետի Տաճարքն, յորս փառաբանէին զԵստուած Հարքն առաջինք և Մաշտոց ընդ նոսա: Բայց վասն հրաշարե ազգեցութեանց ձեռնտուութեամբ միմեանց, այրն Եստուծոյ և թաղուհին գեղեցկաբալ յօրինեալ զսուրբ Եռաքելոցն ի զազաթան լերին գմբէթաւոր և հոյակապ 1) (ՅԻԵ) մերձ նշանակեալ սուրբ Տաճարացն (897, ՅԻԵ), յատկացուցեալ զայն տեղի բարձրաբերձ ի զազաթան լերինն, լինել Եռաջնորդարան և ուսումնասէր անձանց վարժարան:

Իսկ ի ստորոտ լերինն կառուցին յանուն սուրբ Եստուածածնի հոյակապ ժողովարան և աղօթատեղ 2) սրբոց ձգնողեաց մենացեալ հարց. որոց վասն սահմանեալ զկարգ և զկանոն սրբոյն Բարսէի 3), ժողովեալ զբազմութիւն միանձանց վարժեաց զնոսա ի կրօնաւորական կրթութիւնս, և հաւաքեալ զբազում զիրս մարդէր ի նոսին զմիանձունս, և վարէր ինքն կեանս խստակրօն, և լոկ բանջարով շատանայր, և ընծայէր զանձն օրինակ բարի ամենեցուն: Եւ երանելի թաղուհին Մարիամ զարդարեալ զսուրբ եկեղեցիսն վաշիւռչ և արժանաւոր զգեստիւք, սրբութեանց անօթիւք, և սենեկացն հարկաւորօք, կայր և ինքն աստուածահաճոյ վարուք ի վանս Կուսանաց:

Բայց յաւուրսն յայնոսիկ ևս՝ ի սաստկանալ պատերազմին Յուսիպ Ստիկանի ընդ աշխարհս մեր, հարազատ որդիք երանելուհւոյն, Սահակ և Վասակ Սիւնիք առեալ զընտանիս և զմայրն իւրեանց Մա-

(1) Յերկայնութիւնն է 21 1/2 քաղ. հանդերձ սեղանովն, իսկ ի լայնութիւնն 15 քաղ.

(2) Սաղաչէն՝ յերկայնութիւնն կանգուն . . . և ի լայնութիւնն . . . յորում կատարեն արգէն զժամերգութիւնս:

(3) Նովին կանոնիւն ընթացեալ են ցարդ և ընթանան զարդիս անխափան և ջրմեղանդն մըշտամուռնջ աղօթիւք:

ըիամ՝ գնացին յաշխարհն Ուտի, դադարեցան յանձաւախիտ ամրոցս մայրեաց, սպասելով այցելութեան Տեառն: Ենդ մեռաւ սրբակրօն մայր նոցա Մարիամ, որ էր քոյր արքային Սմբատայ. այլ յետ քանի մի ամաց մարմին նորա բերեալ թաղեցաւ աստ ի Աէվան կղզի ի դադարեաց լերին՝ մերձ սուրբ Եռաքելոց հոյակապ յինքենէ շինեալ Տաճարին, թէ և ի Չամչեան պատմութեան զրի իբր տարեալ թաղեցաւ ի Գեղարքունիս՝ յեկեղեցին ի (որ) կոչիւր Շողագայ:

Եւ երանելին Մաշտոց՝ յառաջ քան զայս պատերազմ և զփախուստ իշխանացն Սիւնեաց, յետ մահուան Գեորգայ Աթուղիկոսի, միաբան հաւանութեամբ ամենեցուն ընտրեցաւ և եղաւ Աթուղիկոս. որ ի միջոցի եօթն ամսոց վախճանեալ և սորա, եղաւ ձեռնասուռն և ազգային իւր Յօհաննէս վեցերորդ պատմաբան ի Վրաստանակերտ աւանէ: Եւ զՄաշտոց թաղեցին ի Գառնի ի հովանոց արքային Տրդատայ:

Բայց թէ՛ աստանօր Միքայէլ պատմիչն Չամչեան զինչ կամի սարդեցուցանել ի վկայեալ դաւանութիւնս այս երանելի Մաշտոցիս, որ զկնի Աթուղիկոսութեամբ վախճանմանն, իբր յերազոյ սթափեալ, և հրաշիւք վնա կենդանացուցեալ, ի մէջ երկրորդ հասորոյ պատմութեան իւրոյ, յերեսն 724՝ վերաբերէ այսպէս:

«Սոյն այս երանելիս մինչդեռ տակաւին էր ի Աէվան կղզւոյ ի ժամանակս թաղաւորութեանն Եշտոյ Եռաջնոյ, լուեալ թէ ոմանք յանուպայ անձանց բազում անպաշտօն բանս խօսէին զժողովոյն Շիրակիսնու և առաւել ևս զսուրբ ժողովոյն Վաղկեղոնի, և խռովէին զժողովուրդին, զրեաց ընդ դէմ՝ նոցա թուղթ նզովից, սաստիկ բանիւք,՝ և զայլս տեսանելի է ի պատմութեան, որովք հետեւեցուցանէ լռելեայն, իբր թէ՛ և այս Մաշտոց հաւանէր ժողովոյն Վաղկեղոնի, ըստ հաճոյից իւրեանց:

Բայց մէք տեսանեմք ի բուն բանից երանելոյն Մաշտոցի, զոր բառ առ բառ գրէ Յովհաննէս Աթուղիկոս ի պատմութեան

իւրում. որ յետ այլ բանից ի զիրն առ Երաս սպարապետ և հօրեղբայրն Սմբատայ արքայի, որոյ սկիզբն է այս: «Աէն եհաս ի վերայ հրաման հզօրիդ պատկառելիք, զոր և ընկալայ սիրով հոգւոյ, ըստ սննդակից գոյոյ ինձ ի մանկութենէ օրինացն Եստուծոյ, և այլն. յետ սկզբնաւորութեան բանիցն հետեւեցուցանէ այսպէս.

«Բայց իմ նզովք դատապարտութեան յաւէտ յիրաւի և արժանի էր. և զի վրիպեցայ, և ըստ արտուղի անկեալ ինքնահրաման բարձի զետրոց սուրբ Հարցն, որ ի մէջ մեր և Վաղկեղոնականացն. վասն որոյ աղօթահայց ապաշխարութեամբ, և առաջի անկամբ պատառեցի նովին սուրբ ձեռք զձեռնադրեալսն յինէն կարծեօք: Բայց ամենայն դիտաւորութիւն թղթիս զմեզաց իմն ակնարկէր զբարանս սոցա՝ նոցա բանսարկեալ, սատանայի վարդապետութեամբ, որ մարդասպանն է իսկզբանէ, կամ ոգեսպան և բանսուտ և որոմնացան, և այլ բանքն՝ սորին հետեւեալք հային առ Գեորգ Աթուղիկոսի անմեղութիւնն:

Երդ ահա՛ երանելի Մաշտոց Աղիվարդեցի ինքնին խոստովանի թէ՛ նզովք դատապարտութեան, յաւէտ յիրաւի և արժանի էր, և թէ՛ վրիպմամբ ինքնահրաման բարձեալ է զետրոց սուրբ Հարցն, որ ի մէջ Հայոց և Վաղկեղոնականացն, և յետ այնորիկ աղօթահայց ապաշխարութեամբ պատառեալ է նովին ձեռք զձեռնադրեալսն յինքենէ կարծեօք:

Վասն ոյր պատճառի բազմաշխատ և իմաստապատում Հայր Միքայէլն Չամչեան զառաջին սխալագրութիւնն Մաշտոցի, որ ասէ աստ թէ՛ ամենայն դիտաւորութիւն թղթիս զմեզաց իմն ակնարկէր զբարանս, սոցա՝ նոցա բանսարկեալ սատանայի վարդապետութեամբ, որ մարդասպանն է իսկզբանէ, կամ ոգեսպան և բանսուտ և որոմնացան՝ ոչ յիշէ: Եհա՛ խոստովանութիւն կատարեալ անդիտութեամբ սխալանացն Մաշտոցի՝ իսկ իւր բանիւ և գրութեամբն: Եթէ զկնի սխալանաց ուրուք, կատարեալ զղջմամբ խոստովանութեան նոյն անձին, ոչ է իրա-

ւամբ տեղի տալի, ուրեմն և Պետրոս, ըստ Չամչեանց, վէմն հաւատոյ, յետ ուրացութեանն, ընդունայն ելեալ արտաքս ելաց դառնապէս: Իսկ եթէ՝ եկեղեցական օրէնք անլուծանելի է, զյանցանս ճանաչողաց զգջումն ընդունել, ընդէջ միայն զառաջին նշովն Մաշտոցի տեսանէ պատմարանն Միքայէլ, որ պատառեալ իսկ է այն գիր, նորին իսկ ձեռամբ Մաշտոցի, որպէս ինքնին վկայէ, ըստ վերոգրելոյս, և ոչ ընթերնու, առ Եբաս Սպարապետն գրեցեալ, թէ՛ ինքնահրաման բարձի բզխարոց սուրբ Հարցն, որ ի մէջ մեր և Վաղկեդոնականացն: Յայտ է թէ՛ Վաղկեդոնասէր պատմիչն նմանեալ Յազկերտի, զԽաչ և զԹադուլմն Տեսուն մերոյ լսել ակորթեալ է, և ոչ ի միտ առեալ զասացեալն մանկագոյն նախարարին Արուանձակայց Վարեգինն. ընդէջ ցայդ վայր միայն ընթերցար, և ոչ յառաջ խաղացեալ տեսեր՝ և առ Եբասն գրեցելովքն՝ զգզջումն և զպատառումն, առաջինն սատանայական որդայթիւ խարեցեալ դոն Մաշտոցի, որ կամիս շուարեցուցանել զընթերցողան պատմութեանդ. զի թէ՛ Մաշտոց ընկալեալ է զժողովն Վաղկեդոնի, ուրեմն և մեղաւոր: Իսկ որպէս յառաջ քան զայս ի յատուկ ողջունադրութեան իմում առ բոլոր Եբրայինսդ, թէ վասն Տօնացուցի Արմէն Աթուղեկոսի և թէ՛ վասն վարուց պատմութեան Մխիթար Եբրայ Աբաստացւոյն, 1814, ի դեկ. 4, դասնի գրեցեալ այսպէս: «Վախմբ թէպէտ զազգոյուտ տաժանակիր երկամբք զաշխատանս Հայր Միքայէլ վարդապետի յամենայն պիտանի գրուածն իւր, և մանաւանդ ի գերազանց արդիւնալի վաստակըս, ի պատմութիւնս Հայոց, որք են թաղեալ զանձք հայրենեաց անցայտք ի ժառանգութեանս, որովք արդէն փարթաւաջաբ: Իսկ և յայնս ոչ սակաւք արտաքոյ իրաւանց ընդդիմակք ուղիղ դատողաց ելանեն առաջն զոմանց սրբոց Հարց, Հայրապետաց, Աթուղեկոսաց, Ապիսկոպոսաց, Արդապետաց և գիտնական Իշխանաց, զոմանց թէ՛ զաղանի հաճեալք էին Հռոմայու եկեղե-

ցւոյն, զոմանց թէ՛ զրեցին առ սրբազան Փափն հաճութիւն Տօմարի և Վաղկեդոնի ժողովոյն, և զայրոց թէ՛ յաւուր յետին հիւանդութեան ընկալան զժողովն զայն, զորոց զբացայայտութիւնն տեսցեն անդ բանասէր եղբարք: Եստանօր տեսլի է թէ՛ և երանելոյս Մաշտոցի ակամայ սխալումն է մի ի նոցունց և զկամաւոր զգջումն և հրատարակեալ խոստովանութիւնն անցայտ թաղեալ է Վաղկեդոնասէր գիտնական պատմիչն:

Մեք դարձ արասցուք ի շաւիղս բուն պատմութեան մերում:

Ի ժամանակին այնմիկ, երբ նորոգ բարեկարգեալ էր կղզին Ալվանու հրեշտակիրօն վարուք, և համբաւեալ ի Հայաստան զաւառ, յորդորեալ բարենախանձ հողի Աշոտի Իշխանաց Իշխանի, զայ իւրովք հանդերձ, յուխտ և յերկրպագութիւն սրբացեալ Տաճարաց, և ի ժառանգել զաղօթս մենամարտիկ սրբակրօն անձանց: Եւ օժիռ արժանաժառանգ աղօթից նոցին՝ շնորհէ վանօրէիցս այսոցիկ ի պիտոյս, և մերկամարմին աղօթաւորաց յապրուստ, զվեց զիւզս, որք են Վարսէր (որ է Չոչո), Համաքարերդ, Գոմաձոր, Իւրդքն, Թառեաց—տափ և Որսն—Աւակածին, որ է Ծակքարն ի Վաղար: Նաև զայդիս ի Գառնի և յԱրեւան: Յորոց միայն ի ներկայիս ունի ի ձեռն զՀամաքարերդն, Մաշտոցներ կոչեցեալ լերամբք, և զԳոմաձոր իւր Հայիրըղովն (սիղափայրիւն):

Եյլև շնորհեաց մեծ Իշխանն Աշոտ, առ ինքն եղեալ զՓրկական Նշան աստուածընկալ Աննաց փայտին, ըստ գրութեան Ստեփաննոս Օրպէլեանին և հին Հայաստանի պատմութեանն:

Օ ի թէպէտ, զինի վախճանի երանելոյն Մաշտոցի յաջորդաբար սրբակրօն Հարք Վանահարք և Առաջնորդք անպակաս եղեալ են ի Ալվանայ կղզւոյն. բայց երեւելն ի նոսա բնիկ միաբանակից կրօնաւորացն էր (Տէր Սարգիս Վարդապետ): Սմա տուեալ էր Գաղիկ արքայ յառաջ քան զթագաւորելն զվանսն Շողագայ. և յետ թագաւորելոյն կարգեալ էր զնա Առաջնորդ Ալվանայ վանիցն. և զի քաջ

գիտէր զառաքինական ընթացս կենաց նո-
րա, նմին իրի յետ մահուան Խաչկայ գնա-
ետ ձեռնադրել Վաթուղիկոս (992 .
ՆԻԵ) :

Սա ինքն Տէր Սարգիս ունէր զմարդա-
սէր և զքաղցր բարս, և էր խոնարհ ի կեն-
ցաղաւարութեան և խոհեմ ի կառավա-
րութեան, միանգամայն ձգնազգեաց և
աղօթասէր. զի զոր ինչ կարդ պահոց և
աղօթից ունէր ի վանականութեան իւ-
րում, զնոյն պահաց անխափան և ի կա-
թուղիկոսութեան :

Եյս Հայրապետ գտեալ զնշխարս ինչ
սրբոց Հռիփսիմեանց, շինեաց եկեղեցի
յանուն նոցա առնթեր Վաթուղիկէին
Ենդոյ Ի սորա յաւուրս ծաղկեցաւ Ստե-
փաննոս Վարդապետ Տարօնեցի Եսողնիկ
կոչեցեալ պատմարան :

Ի չորրորդ ամի Վաթուղիկոսութեան
Տեառն Սարգսի, ի Գեկտ. ամսոյն եղև գետ-
նաշարժութիւն սարսափելի և տեւաց
ամիսս եօթն (995), և եղեն քանդմունք
մեծամեծք, զորմէ գրէ Եսողնիկ :

Հայտ է թէ, յայսմ շարժմանէ քայ-
քայեալ և աւերեալ է սուրբ Յարութեան
Տաճարն Սէվանու, որոյ այժմ միայն զա-
վաչաի որմունքն տեսանին, որք ունին
զնշան հնազոյն շինուածոց : Եոյնպէս և
սուրբ Պարապետի մատուռն խարխալեալ,
որ յետոյ բարեպաշտ ժողովուրդ Գե-
ղարքունեոյ գմբէթաւոր յօրինուածով
վերականգնեալ են, ըստորում նախնա-
կան յիշատակ Իշխանաց և Տեարց իւր-
եանց էր :

(Ըարոնալէլ)

ԱՅՐԻՎԱՆՔ

ԿԱՐ

Գ Ե Ր Ե Ն Գ Ե Ն Գ

Հայաստանի հնազոյն և երևելի վան-
քերէն մինն է Եյրիվանք կամ Եյրից
վանք՝ այժմ Գեղարդայ վանք կոչեցեալ :

Հանդերձ ճարտարագործ միանգամայն
ղարմանալի փորուածքներով ժայռից մէջ՝
ունի մենաստանս արժանի ուշադրութեան
պատմական կարևոր անցքեր և կը պա-
րունակէ հետաքրքրական արձանագրու-
թիւնք՝ զորս տեղագրութեան հետ ար-
ժան կը համարիմ հաղորդել ցանկացո-
ղաց :

Հաւանական է, զի մեր երկրորդ Լու-
սաւորիչ Ս. Գլխորդ Պարթևի օրերով
շինուած է այս վանք, և զուցէ Տրդատ
թագաւոր կառուցանել տուած լինի զայս՝
հոգւոյ փրկութեան անձկանօք ի խորշս
վիմոց և ի լերինս առանձնասէր կեանք վա-
րելու եռանդ ունեցող ձգնաւորաց հա-
մար, որ շատ յարմարութիւնք և դիւ-
րութիւնք կը պարունակէ տեղը :

Գուցէ, զառաջինն՝ մի այրի մը փոքրիկ
եկեղեցի փորուած լինի, ուստի կոչուած է
Եյրիվանք կամ Եյրից վանք :

Ի հնուց հետէ գրեթէ միշտ անուանի՝
բարեհամրաւ և պայծառաշին եղած է այս
վանք. յորում Գլխորդ Լուսաւորիչ -
ինչպէս աւանդութիւն է, — Մեծն Ներսէս
Հայրապետ, Իսահակ Պարթև և Հայրապետ,
Յովհաննէս Զ. Վաթուղիկոս Գրասխանա-
կերտցի, Ստեփան Վաթուղիկոս Եղուա-
նից, Գլխորդ Ժ. Վաթուղիկոս՝ ինչպէս և
ի 1869 թուին Գեղորդ Գ. Վաթուղիկոս՝ և

